ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 ապրիլի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

44
(3253)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱՆԴԵՍ ԵՆ ԵԿԵԼ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

2026 թվականի քաղաքական զարգացումների կենտրոնում է գործարար Սամվել Կարապետյանի նախաձեռնած «Ուժեղ Հայաստան Սամվել Կարապետյանի հետ» դաշինքը: Վերջին օրերին մի շարք քաղաքական ուժեր եւ գործիչներ հանդես են եկել նրա աջակցությամբ կամ համագործակցության պատրաստակամությամբ:

Նախ «Ուժեղ Հայաստան» կուսակցության խորհրդի անդամ Նարեկ Կարապետյանը դաշինքի ստեղծման վերաբերյալ հուշագիր է ստորագրել «Նոր դարաշրջան» կուսակցության նախագահ Հարություն Հարությունյանի եւ «Միավորված հայեր» կուսակցության պատվավոր նախագահ, լիազոր ներկայացուցիչ Նաիրի Սարգսյանի հետ:

Հուշագիրը ստորագրած քաղաքական կուսակցությունները հայտարարել են, որ միավորվում են «Ուժեղ Հայաստան» կուսակցության քաղաքական օրակարգի եւ նախընտրական ծրագրի շուրջ եւ գործելու են պետականության ամրապնդման, ազգային եւ հոգեւոր արժեքների պաշտպանության, արդյունավետ եւ հաշվետու կառավարման, տնտեսական կայուն զարգացման, իրավական եւ սոցիալական արդարության եւ համերաշխության ապահովման սկզբունքների վրա:

Նշվում է, որ ձեւավորվող դաշինքի գաղափարական հիմքը համահունչ է Սամվել Կարապետյանի կողմից առաջ քաշված ազգային-պետական եւ արժեքային մոտեցումներին, եւ կողմերը պատրաստակամություն են հայտնում համախմբվել այդ գաղափարական հենքի շուրջ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Վերաքննիչ դատարանը մերժել է դատախազության բողոքը, եւ ԱԺ նախկին նախագահ, ներկայումս արտգործնախարար Արարատ Միրզոյանի ծեծի գործով մեղադրյալներից Արա Բադոյանի 3,5 տարվա ազատազրկման որոշումը թողել է անփոփոխ: Բադոյանը մեղադրվում է 2020 թվականի նոյեմբերի 9-ին Ազգային Ժողովի նախագահ Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրելու համար: Դատախազությունը ՀՀ վերաքննիչ դատարանից պահանջել էր առավել խիստ պատիժ սահմանել, սակայն դատարանը մերժել է դատախազությանը եւ առաջին ատյանի դատարանի որոշումը թողել անփոփոխ: Հիշեցնենք, որ դեպքը տեղի է ունեցել 2020թ. նոյեմբերի 9-ին կապիտուլյացիոն հայտարարության ստորագրումից հետո, երբ քաղաքացիներն ինքնաբուխ հավաքվել են, մուտք գործել ԱԺ շենք: Արարատ Միրզոյանի նկատմամբ բռնությունը տեղի է ունեցել հենց այդ օրը փողոցում: Նշված դրվագով մի քանի քրեական գործ է ուղարկվել դատարան, մյուս դրվագներով դեռեւս քննությունը շարունակվում է:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Նիկոլ Փաշինյանի ընտանիքի հետ քավորական հարաբերություններ ունեցող Հայկ եւ Վահե Ղալումյանները հեղափոխությունից հետո նոր պաշտոններ ստացան. մեկը՝ պատգամավոր, մյուսը՝ Իջեւանի քաղաքապետ: Ապա Հայկ Ղալումյանը 2021-ին դարձավ Տավուշի մարզպետ, իսկ եղբայրը տեղափոխվեց Ազգային Ժողով: Կարելի է ասել, որ այս ընտանիքի պարագայում կիրառելի է «խնամի-ծանոթ-բարեկամ» արտահայտությունը. Ղալումյան եղբայրների հայրը՝ Վոլոդյա Ղալումյանը, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի Իջեւանի տեղամասի շահագործման բաժնի պետն էր, ինչպես նաեւ Տավուշում հայտնի դեմք է՝ տարիներ առաջ հիմնելով եւ համակարգելով ՀՀԿ-ի Տավուշի գրասենյակը: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի 2024 թվականի հայտարարագիրը եւ պարզեց նրա գույքային վիճակը: Ըստ հայտարարագրի՝ Հայկ Ղալումյանը մարզպետի պաշտոնը ստանձնել է 2021 թվականի ապրիլի 8-ին: Անշարժ գույքի մասով՝ նա ունի միանձնյա սեփականությամբ հողամաս Տավուշի մարզի Իջեւանում, որը ստացել է նվիրատվությամբ 2008 թվականի օգոստոսի 11-ին:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

2026թ. հունիսի 7-ը մոտենում է արագ, բայց քաղաքական դաշտը ոչ թե հստակեցվում, այլ ավելի է մթագնում: Գրեթե 60 օր է մնացել ընտրություններին, արդեն մոտ 8 քաղաքական ուժ հայտարարել է մասնակցության մասին, բայց իրական պայքարը կրկին սահմանափակվում է նույն երկու անուններով՝ Նիկոլ Փաշինյան եւ Սամվել Կարապետյանի գլխավորած ուժի: Սա արդեն քաղաքական ճգնաժամ չէ. սա քաղաքական փակ շրջան է: Մի կողմից գործող իշխանությունն է իր վարչական ռեսուրսով, կայուն, բայց հոգնած ընտրազանգվածով: Սա նշանակում է միայն մեկ բան. ընտրողը կրկին ընտրում է ոչ թե «լավը», այլ «ավելի քիչ վատը»: Ռոբերտ Քոչարյան, Արամ Սարգսյան, Գագիկ Ծառուկյան, Արման Թաթոյան, Լեւոն Ջուրաբյան եւ այլք փորձում են ձեւավորել «երրորդ բեւեռ», բայց իրականում բաժանված են այնքան, որ միասին էլ չեն կարողանում դառնալ իրական այլընտրանք: Այսինքն՝ մենք ունենք ընտրություններ, որտեղ կան շատ մասնակիցներ, բայց քիչ ընտրություն: Ամենահետաքրքիր հարցը նույնիսկ այն չէ, թե ով կհաղթի: Ավելի կարեւոր է՝ արդյոք որեւէ ուժ կկարողանա ձեւավորել սահմանադրական մեծամասնություն: Եթե ոչ, Հայաստանը կանգնելու է կոալիցիոն բանակցությունների, քաղաքական առեւտրի եւ անկայունության նոր փուլի առաջ: Այս ընտրությունները կարող էին դառնալ վերափոխման հնարավորություն: Բայց այս պահին ավելի շատ նման են հերթական վերահաստատման՝ նույն դեմքերի, նույն հակասությունների եւ նույն փակուղու: Եւ ամենավտանգավորը սա է. հասարակությունը աստիճանաբար հաշտվում է այն մտքի հետ, որ այլ տարբերակ պարզապես չկա:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՎԱՍԱՐ Է»

Ապրիլի 7-ին «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամները մամուլի ասուլիս էին հրավիրել ՀՀ ԱԺ-ի դիմաց՝ ներկայացրել իրենց բողոքն առ այն, որ ԱԺ-ն արտահերթ նիստ է իրականացնում Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ իրականացնելու համար: Այն մասնավորապես ենթադրում է դաշինքներում, կուսակցություններում չներառել անձնանուններ, իսկ մինչ այդ «Ուժեղ Հայաստան»-ը հայտարարել էր, որ մասնակցելու են ընտրություններին «Ուժեղ Հայաստան՝ Սամվել Կարապետյանի հետ» դաշինքով: Նշենք, որ նախագիծն ապրիլի 7-ին ընդունվել է 66 կողմ, 16 դեմ ձայնով: Այս փոփոխությունների վերաբերյալ ArmLur.am-ը զրուցել է «Հայաստանը ես եմ» քաղաքական նախաձեռնության ղեկավար Նաիրի Մարգսյանի հետ:

- Իշխանության կողմից արտահերթ նիստով նման նախագիծ ներկայացնելը ինչպե՞ս եք գնահատում:

- Սա իշխանության վախերի վառ դրսեւորումներից մեկն է: Մասնավորապես, արտահերթ նիստով նման նախագիծ ներկայացնելը նշանակում է, որ իրենք արդեն ծանոթ են հարցումների տվյալներին եւ տեսնում են, որ գնում են դեպի պարտություն:

Մի կողմից՝ սա վախերի դրսեւորում է, մյուս կողմից՝ մեսիջ հասարակությանը եւ բոլոր ընդդիմադիր գործիչներին, որ իրենք պատրաստ են ամեն ինչ անել՝ թե՛ իրավաչափ, թե՛ ոչ իրավաչափ ճանապարհներով, նույնիսկ օրենքով արգելված ցանկացած քայլի գնալ:

Հիշենք, որ ամիսներ առաջ եւս մեկ օրենքի նախագծով արգելվեց դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների մասնակցությունը ընտրություններին: Սա նշանակում է, որ մենք բոլորս պետք է լինենք շատ զգոն: Թե՛ անուն-ազգանունների հանելը, թե՛ դիտորդական առաքելությունների արգելումը եւ թե՛ տարբեր ձեւաչափերով ընտրություններին խոչընդոտելու փորձերը նախապես ուղղված են ընտրությունների ելքի վրա ազդելուն: Սակայն պետք է հիասթափեցնել նրանց, որովհետեւ դա իրենց չի օգնելու:

- Սակայն իշխանության ներկայացուցիչները հայտարարում են, որ որեւէ վախ չունեն: Ինչպե՞ս կմեկնաբանեք:

- Այո՛, իրենք հայտարարում են, թե որեւէ վախ չունեն: Օրինակ՝ պարոն Ռուբինյանն ասում էր, որ ընդդիմության ասածներին պետք չէ լուրջ վերաբերվել, իսկ ՔՊ-ական պատգամավոր Հալումյանն էլ նշել է. «Ինչի՞ց վախենանք, զրոյի՞ց վախենանք»՝նկատի ունենալով Սամվել Կարապետյանին: Սակայն եթե իրապես վախ չունենային եւ հարցումների դրական տվյալներ ունենային, ապա այս նախագիծը շատ ավելի վաղ կբերեին: Այսինքն՝ սա ընդամենը հերթական սուտն է, կեղծիքն ու մանիպուլյացիան: Եթե չեն վախենում, ապա ինչո՞ւ են նախաձեռնում նման փոփոխություններ:

- Ձեր կարծիքով՝ արդյո՞ք իշխանության եւ ընդդիմության միջեւ հավասար մրցակցություն է տեղի ունենում:

- Իհարկե ոչ: Մրցակցությունն անհավասար է, որովհետեւ իշխանությունը, սկսած պետական ռեսուրսի չարաշահումից, ճնշումներից, ընտրակեղծիքներից եւ տարբեր շահագրգռումներից, մինչեւ իշխանական լծակների օգտագործումը, ամեն ինչ կիրառում է ընդդիմության դեմ: Հետեւաբար նման պայմաններում հավասար պայքարի մասին խոսք չի կարող լինել:

- Պարոն Սարգսյան, օրերս նաեւ հայտարարեցիք, որ միանում եք Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստան» նախաձեռնությանը: Ի՞նչ համագործակցություն եք ակնկալում:

- Մենք երեք ուժերով դաշինք ենք կազմել, եւ մենք դաշնակիցներ ենք: Ակնկալիքը, բնականաբար, համատեղ պայքարն է, ուժերի եւ ռեսուրսների կոնսոլիդացիան, որը պետք է բերի քանակական եւ որակական արդյունքի:

- Համապետական ընտրությունների վերաբերյալ ի՞նչ կանխատեսումներ ունեք: Կլինի՞ իշխանափոխություն, թե՞ իշխանության վերընտրություն:

- Իշխանափոխության հավանականությունը շատ բարձր է: Ավելի հստակ կանխատեսումները կներկայացնենք ավելի ուշ, որովհետեւ ամեն ինչ կախված է մեզանից եւ մեր աշխատանքից: Եթե աշխատենք օր ու գիշեր, շատ ճշգրիտ եւ թիրախային, ապա, միանշանակ, հաղթանակն անխուսափելի է:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՆԳՆ-Ն ԴԻՏԱՐԿՈՒՄ Է

Խցանումները բոլոր խոշոր քաղաքների համար լոկալ ճգնաժամեր են, որոնք խաթարում են քաղաքային կյանքի ռիթմը: Երեւանում, ի թիվս այլ գործոնների, դրանց առաջացման հիմնական պատճառներից են տրանսպորտային միջոցների շարունակական աճն ու երթեւեկության կանոնների ոչ պատշաճ պահպանումը:

Պարեկային ծառայության պետի տեղակալ Արման Չիլինգարյանը նշում է. «Պետք է տարանջատել իրական խցանումները մեծ հոսքերով պայմանավորված՝ ինտենսիվ երթեւեկությունից: Որպես խցանում անհրաժեշտ է դիտարկել այն դեպքերը, երբ ճանապարհների հատվող մասը, օրինակ՝ խաչմերուկն ամբողջությամբ փակվում է, եւ որեւէ կողմից այլեւս հնարավոր չի լինում իրականացնել երթեւեկություն»:

Իսկ այն դեպքերում, երբ երթեւեկությունը չի ընդհատվում, այլ պարզապես դանդաղում է՝ պայմանավորված տվյալ ժամի կամ այլ հանգամանքներով հոսքերի մեծացմամբ, իրավիճակը պետք է գնահատել որպես ինտենսիվ երթեւեկություն:

«Պետք է երկու մասի բաժանել խցանումները. խցանումներ, որոնք առաջանում են որոշակի իրավիճակներով պայմանավորված, օրինակ՝ ՃՏՊ-ներ կամ ճանապարհային շինարարական աշխատանքներ եւ խցանումներ, որոնք առաջանում են վարորդների գործողությունների հետեւանքով»,-նշում է Արման Չիլինգարյանը: Նրա խոսքով՝ վարորդները հաճախ չեն պահպանում ճանապարհային երթեւեկության կանոնները. երբեմն նույնիսկ կանաչ ազդանշանի դեպքում մուտք են գործում ծանրաբեռնված խաչմերուկ, ինչի հետեւանքով չեն հասցնում ժամանակին ազատել ճանապարհը եւ առաջացնում են խցանում: Հոսքերի դանդաղեցմանը նպաստում են նաեւ վերադասավորումները, երբ վարորդները մեկ գոտուց մյուսին անցնելիս ստիպված շղթայական արգելակում են, ինչն էլ հանգեցնում է երթեւեկության հապաղման եւ խցանումների:

«Մեր կողմից առաջին հերթին միջոցներ են ձեռնարկվում ոչ ստանդարտ իրավիճակներով պայմանավորված խցանումները կամ հապաղումները կանխարգելելու ուղղությամբ: Ուսումնասիրվում են ՃՏՊ-ների հանգամանքները, մասնավորապես՝ նույն տեղում նույն պատճառով տեղի ունեցող պատահարներն են դուրս բերվում եւ այդ ուղղությամբ ձեռնարկվում են միջոցներ»,-ներկայացնում է Արման Չիլինգարյանը: Նա ընդգծում է, որ մայրաքաղաքի մի շարք հատվածներում տեղադրվել են կանգնակներ, միաժամանակ քաղաքապետարանի հետ պայմանավորվածություններ են ձեռք բերվում, որպեսզի ճանապարհաշինարարական աշխատանքները կատարվեն հիմնականում գիշերային ժամերին կամ այն օրերին, երբ երթեւեկությունը ծանրաբեռնված չէ: «Ինչ վերաբերում է վարորդների գործողություններով պայմանավորված խցանումների կամ հապաղումների կանխարգելմանը, ապա մեր կողմից ուսումնասիրվում է լուսացույցի թույլատրվող ազդանշանով խաչմերուկ մուտք գործող վարորդներին պատասխանատվության ենթարկելու հարցը: Ուսումնասիրում ենք նաեւ այն հնարավորությունը, երբ ինտենսիվ երթեւեկության պայմաններում աջ ու ձախ անհարկի վերադասավորումներ անող վարորդների մասով պատասխանատվություն կիրառելու հնարավորության եւ ազատ գոտին չարաշահող ու այլ տրանսպորտային միջոցների հարկադրելու հետ կապված պատասխանատվության միջոցներ նախատեսելու օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու հնարավորության հարցը»,-հավելում է Պարեկային ծառայության պետի տեղակալը:

Խցանումների կանխման առաջնային շահառուն հենց վարորդն է, եւ ի վերջո նրա գիտակցված ու պատասխանատու վարքագծից է կախված, թե որքանով կիրառելի կդառնան պատասխանատվության միջոցները: ՆԳՆ ոստիկանության նպատակը ոչ թե վարչական միջոցների կիրառումն է, այլ երթեւեկության անվտանգությանն ուղղված վարքագծի փոփոխության խթանումն ու քաղաքի ազատ ու անխափան շարժի ապահովումը:

ՔՎՈՏԱ ԿԿԻՐԱՌՎԻ

Հայաստան ներմուծվող իրանական ծագման առանձին տեսակի ապրանքների նկատմամբ քվոտա կկիրառվի: Համապատասխան որոշումն ընդունվեց կառավարության երեկվա նիստում. որոշման համար հիմք է ընդունվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշումը:

Հաշվի առնելով, որ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության շրջանակներում սակագնային կարգավորման պատասխանատու պետական կառավարման մարմինը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է, ուստի վերջինս ճանաչվում է առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների ներմուծման լիցենզիա տալու մասով լիազոր մարմին:

ՀԱՆԴԻՊԵԼ Է

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն ապրիլի 9-ին հանդիպել է Էստոնիայի ԱԳ նախարար Մարգուս Ցահքնայի հետ: Զրուցակիցների քննարկումների առանցքում են եղել ինչպես երկկողմ եւ միջխորհրդարանական կապերին առնչվող հարցերը, այնպես էլ ՀՀ-ԵՄ հարաբերություններին եւ ժողովրդավարական բարեփոխումներին վերաբերող թեմաները: Մտքեր են փոխանակվել նաեւ տարածաշրջանային զարգացումների շուրջ՝ հատուկ անդրադարձ կատարելով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաստատված խաղաղության գործընթացին ու «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» (ԹՐԻՓՓ) նախագծին:

ԱՆՏՈԿՈՍ ՎԱՐԿԵՐ

Հայաստանի ագրոպարենային ոլորտը 2026-27 թվականներին կառավարությունը կսուբսիդավորի՝ տրամադրելով անտոկոս վարկեր: Համապատասխան որոշումն ընդունվեց ՀՀ կառավարության երեկվա նիստում:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանի խոսքով՝ այս սուբսիդավորմամբ ագրոպարենային ոլորտում աշխատանքներն ավելի արդյունավետ կիրականացվեն եւ գյուղատնտեսական ու վերամշակված արտադրանքի արտադրության ծավալներն էլ ավելի կավելանան: Նա տեղեկացրեց, որ վարկերը տրամադրվելու են դրամով, անկանխիկ եղանակով, յուրաքանչյուր շահառուին տրամադրվող վարկի սահմանաչափը կկազմի 1-2 մլն դրամ, ընդ որում, նույն շահառուին տրամադրվող վարկի առավելագույն հանրագումարը չի կարող գերազանցել 2 մլն դրամը:

Նախարարը նշեց, որ վարկը կտրամադրվի տարեկան մինչեւ 14 տոկոս փաստացի տոկոսադրույքով, սակայն սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որ շահառուի կողմից վճարման ենթակա վարկի տարեկան տոկոսադրույքը կազմի 0 տոկոս: Վարկի մարման ժամկետը սահմանվում է մինչեւ 3 տարի: Այս ծրագրի իրականացման համար 2026 թվականին կտրամադրվեն շուրջ 40 մլրդ դրամի վարկեր, որոնց սուբսիդավորման համար կպահանջվի շուրջ 2 մլրդ դրամ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է

Ապրիլի 8-ին Ֆրանսիայում ՀՀ դեսպան, Ֆրանկոֆոնիայի մշտական խորհրդում ՀՀ վարչապետի անձնական ներկայացուցիչ Արման Խաչատրյանը հանդիպել է Ֆրանսիայի Եվրոպայի եւ արտաքին գործերի նախարարության՝ Ֆրանկոֆոնիայի, միջազգային գործընկերությունների եւ արտերկրում բնակվող ֆրանսիացիների հարցերով լիազոր նախարար Էլեոնոր Կարուայի հետ: Զրուցակիցներն անդրադարձել են Հայաստան-Ֆրանսիա օրակարգային հարցերին, միջազգային կառույցներում եւ մասնավորապես Ֆրանկոֆոնիայի շրջանակներում Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ ձեւավորված ակտիվ համագործակցությանը: Դեսպանը ներկայացրել է 2027թ. ՀՀ-ում կայանալիք Ֆրանկոֆոնիայի 10-րդ միջազգային մարզամշակութային խաղերի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների ընթացքը՝ վերահաստատելով Ֆրանկոֆոնիայի հոբելյանական խաղերը Երեւանում բարձր մակարդակով հյուրընկալելու Հայաստանի հանձնառությունը: Երկուստեք ընդգծվել է Ֆրանկոֆոնիայի խաղերի կարեւորությունը: Մտքեր են փոխանակվել այս տարի ՀՀ-ում անցկացվելիք ՄԱԿ կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի 17-րդ համաժողովին ընդառաջ իրականացվող աշխատանքների եւ հնարավոր համագործակցության վերաբերյալ: Դեսպան Խաչատրյանը ներկայացրել է Համաժողովի կազմակերպման հարցում ՀՀ տեսլականը՝ ուղղված կենսաբազմազանությանն առնչվող քննարկումներում բոլոր շահագրգիռ կողմերի լիարժեք եւ բովանդակային մասնակցության ապահովմանը: Դեսպան Խաչատրյանը ներկայացրել է նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաստատված խաղաղությունը՝ ընդգծելով դրա հետագա ամրապնդման կարեւորությունը:

ՑՈՒՑԱԿ

ՀՅԴ 29-րդ արտահերթ Գերագույն ժողովի եզրափակիչ նիստում եւ «Առաջ» կուսակցության համագումարում հաստատվել է «Հայաստան» կուսակցությունների դաշինքի նախընտրական ցանկի առաջին երեք տասնյակը.

1. Ռոբերտ Քոչարյան
2. Իշխան Սաղաթելյան
3. Աննա Գրիգորյան
4. Սեւակ Խաչատրյան
5. Արթուր Խաչատրյան
6. Քրիստինե Վարդանյան
7. Աղվան Վարդանյան
8. Գեղամ Մանուկյան
9. Ագնեսա Խամոյան
10. Լեւոն Քոչարյան
11. Արթուր Սարգսյան
12. Լիլիթ Գալստյան
13. Մեսրոպ Մանուկյան
14. Գառնիկ Դանիելյան
15. Քրիստինե Նազարյան
16. Բորիս Թամոյան
17. Նարեկ Մանթաշյան
18. Լուսինե Քարամյան
19. Գերասիմ Վարդանյան
20. Կարեն Սիմոնյան
21. Անուշ Առաքելյան
22. Արման Ղազարյան
23. Արթուր Օհանյան
24. Արմենուհի Կյուրեղյան
25. Միհրդատ Մադաթյան
26. Իգոր Սարգսյան
27. Ռուբինա Պետրոսյան
28. Սամվել Հակոբյան
29. Արծվիկ Մինասյան
30. Անուշ Բրուտյան

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔՈՎ ՀԵՌԱՑԱՎ

Երեկ հայտնի դարձավ, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ապրիլի 4-ին որոշում է ստորագրել, համաձայն որի՝ Սերգո Աթանեսյանը 2026 թվականի ապրիլի 8-ից ազատվել է շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնից:

ArmLur.am-ը ուսումնասիրեց պաշտոնյայի հայտարարագիրը եւ պարզեց, թե ինչ ունեցվածքով է նա հեռանում պաշտոնից: Ըստ տվյալների՝ Սերգո Աթանեսյանը շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնը ստանձնել է 03/10/2023-ին: Հայտարարագրի համաձայն՝ նա ունի անշարժ գույք Երեւանում: Մասնավորապես, համատեղ սեփականությամբ բնակարան է ձեռք բերել դեռեւս 2021 թվականին: Իսկ 2024 թվականին պաշտոնյան ձեռք է բերել երկու անշարժ գույք՝ ավտոկայանատեղի՝ 2,858,000 դրամ արժողությամբ եւ բնակարան՝ 38,682,048 դրամ արժողությամբ:

Այսպիսով, ArmLur.am-ը արձանագրում է, որ 2024 թվականին Աթանեսյանը ձեռք է բերել 2 անշարժ գույք:

Պաշտոնյայի տիրապետման տակ է նաեւ 2012 թվականի արտադրության HYUNDAI մակնիշի ավտոմեքենա:

Հայտարարագրում նշված են նաեւ փոխառություններ: ArmLur.am-ի հաշվարկով՝ տարբեր անձանցից ստացված եւ վերադարձված փոխառությունների գումարները միասին կազմում են 67,829,032 դրամ:

Բանկային հաշիվներում Աթանեսյանն ունեցել է 3,880,000 դրամ մնացորդ, ինչպես նաեւ «Արարատ բանկ» ԲԲԸ-ում՝ 13,359,746 դրամ պարտավորություն: 2024 թվականի ընթացքում նրա եկամուտները կազմել են ընդհանուր 37,747,129 դրամ, որից 12,752,901 դրամը՝ աշխատավարձ, իսկ 1,785,000 դրամը՝ եկամտային հարկի վերադարձ:

Հայտարարագրի համաձայն՝ տարեվերջի դրությամբ նրա վարկային եւ փոխառությունների պարտավորությունները կազմել են համապատասխանաբար 52,739,042 դրամ եւ 17,239,746 դրամ:

Նշենք նաեւ, որ Սերգո Աթանեսյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՏԱՐԱԾԵԼ



Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը կարծում է, որ ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ կնքված հրադադարի համաձայնագիրը պետք է տարածվի նաեւ Լիբանանի վրա: Նա այս մասին հայտարարել է X-ում Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանի եւ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հետ հեռախոսազրույցներից հետո: «Ես հույս հայտնեցի, որ հրադադարը լիովին կպահպանվի հակամարտության բոլոր կողմերի կողմից՝ հակամարտության բոլոր թատերաբեմերում, այդ թվում՝ Լիբանանում: Սա նախապայման է, որպեսզի այս հրադադարը լինի հուսալի եւ երկարատեւ», - հայտարարել է նա: Մակրոնը համոզված է, որ ձեռք բերված համաձայնությունը «լավագույն հնարավոր լուծումն է եւ պետք է հիմք հանդիսանա համապարփակ բանակցությունների համար, որոնք կապահովեն անվտանգությունը Մերձավոր Արեւելքում»:

Նախագահը նշել է, որ այս հարցը քննարկել է նաեւ Քաթարի, ԱՄԷ-ի, Լիբանանի եւ Իրաքի ղեկավարների հետ:

ԱՎԵԼԻ ԴԱԺԱՆ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ ամերիկյան բանակը կվերսկսի հարվածները Իրանի տարածքին, եթե հրադադարի համաձայնագիրը չպահպանվի:

«Եթե սա (համաձայնագրի պայմանների պահպանումը) տեղի չունենա, ինչը չափազանց քիչ հավանական է, ապա հրետակոծությունը կսկսի լինել ավելի ինտենսիվ եւ ավելի դաժան, քան որեւէ մեկը նախկինում եղել է», - գրել է ամերիկացի առաջնորդը Truth Social-ում:

ԴԵՄ Է ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒՆ

Ֆրանսիան չի աջակցում Իրանի եւ Միացյալ Նահանգների կողմից Հորմուզի նեղուցով անցնող նավերի համար վճար սահմանելուն եւ դա համարում է միջազգային ջրերում նավարկության ազատության սկզբունքի խախտում: Այս մասին France Inter ռադիոկայանի եթերում հայտարարել է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժան-Նոել Բարոն:

«Սա անընդունելի է, քանի որ միջազգային ջրերում նավարկության ազատությունը ողջ մարդկության ընդհանուր ժառանգությունն է, որը չպետք է խախտվի որեւէ սահմանափակմամբ կամ անցման իրավունքով», - ասել է նախարարը:

«Ոչ ոք չի ընդունի սա, պարզապես այն պատճառով, որ դա անօրինական է», - հավելել է նա:

Բարոն նշել է, որ հրադադարի հաստատմամբ եւ բանակցությունների մեկնարկով Հորմուզի նեղուցը պետք է վերաբացվի, «որպեսզի մնացած աշխարհը չդառնա այս հակամարտության անուղղակի զոհը»:

ԴԱՐՁԵԼ Է ԽԹԱՆ

Իրանի ժողովուրդը նշում է Գերագույն առաջնորդ Ալի Խամենեիի մահվան քառասուներորդ օրը: Այս վիշտը դարձել է ազգային իդեալների ամրապնդման խթան, ըստ Թուրքմենստանում Իրանի դեսպան Ալի Մոջթաբա Ռուզբեհանիի:

«Իրանի ժողովուրդը նշում է հեղափոխության իմաստուն գերագույն առաջնորդ, բարոյականության եւ կրոնական ուսմունքների խորհրդատու Նորին Գերազանցություն Այաթոլլահ Խամենեիի նահատակության քառասուներորդ օրը եւ սգում է Մինաբ դպրոցի 168 անմեղ աշակերտների եւ նրանց ուսուցիչների համար: Այս վիշտն այժմ դարձել է ազգային իդեալների ամրապնդման հզոր խթան», - Ռուզբեհանիի խոսքերն է մեջբերել դեսպանատան մամուլի ծառայությունը:

Դիվանագետի խոսքով՝ ժամանակակից Իրանի պատմության մեջ նահատակների նահատակությունից հետո քառասուներորդ օրը սգո արարողությունները միշտ ծառայել են որպես գործիք՝ վիշտը կենսունակ, ստեղծագործ եւ կայուն շարժման վերածելու համար: «Այսօր՝ քառասունօրյա անսասանությունից հետո, ոչ միայն պահպանվել է Իսլամական Հանրապետության կառուցվածքի կայունությունը՝ շնորհիվ քաղաքական եւ ռազմական էլիտայի արագ փոխարինման, այլեւ ամրապնդվել է թշնամուն դիմակայելու ազգային կամքը», - նշել է դեսպանը:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԽԱՉԻԿ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Հակակոռուպցիոն կոմիտեն Խաչիկ Սամվելի Գալստյանի գործով որոշում է կայացրել: Նա մեղադրվում է քրեական օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, մեղավորությամբ կատարված արարքի համար:

Նա, նախնական համաձայնության գալով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում 2025 թվականի նոյեմբերի 16-ին կայանալիք համամասնական ընտրակարգով ավագանու ընտրություններում (այսուհետ՝ Ընտրություն) «Հայրենիք» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) թեկնածու Արամ Ղազարոսի Քոչարյանի եւ ինքնությունները դեռեւս չպարզված պատասխանատու այլ անձանց հետ, խմբի կազմում, Ընտրությանը Կուսակցության օգտին քվեարկելու համար, նույն համայնքի մի շարք բնակիչների, այդ թվում՝ «Հայաստանի հանրապետական կուսակցության» համակիրների օժանդակությամբ, ընտրելու իրավունք ունեցող բազմաթիվ քաղաքացիների առաջարկել եւ խոստացել են տալ ընտրակաշառք:

Արամ Ղազարոսի Քոչարյանը մեղադրվում է քրեական օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, մեղավորությամբ կատարված արարքի համար, որ նա, նախնական համաձայնության գալով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում 2025 թվականի նոյեմբերի 16-ին կայանալիք համամասնական ընտրակարգով ավագանու ընտրություններում (այսուհետ՝ Ընտրություն) «Հայրենիք» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) տարածքային շտաբի պետ Խաչիկ Սամվելի Գալստյանի եւ ինքնությունները դեռեւս չպարզված պատասխանատու այլ անձանց հետ, խմբի կազմում, Ընտրությանը Կուսակցության օգտին քվեարկելու համար, նույն համայնքի մի շարք բնակիչների, այդ թվում՝ «Հայաստանի հանրապետական կուսակցության» համակիրների օժանդակությամբ, ընտրելու իրավունք ունեցող բազմաթիվ քաղաքացիների առաջարկել եւ խոստացել են տալ ընտրակաշառք:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԱՊՕՐԻՆԻ ԳՐԱՆՑԵԼ Է ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը զբաղեցրած անձը, պաշտոնեական դիրքն օգտագործելով ծառայության շահերին հակառակ, իրավական հիմքերի բացակայության պայմաններում իրականացրել է հողատարածքների սեփականության իրավունքի ապօրինի գրանցման գործընթացը:

Մասնավորապես՝ պարզվել է, որ հիշյալ պաշտոնատար անձը Երեւան-Սեւան ավտոմայրուղուն հարող հատվածից անժամկետ օգտագործման իրավունքով ապօրինի որոշմամբ հատկացված 0,2200 հա մակերեսով հողատարածքի նկատմամբ ՀՀ հողային օրենսգրքով սահմանված կարգի խախտմամբ եւ համապատասխան փաստաթղթերի բացակայության պայմաններում գրանցել է քաղաքացու սեփականության իրավունքը՝ որպես հիմք նշելով Առինջի գյուղապետի՝ 1996 թվականի հոկտեմբերի 1-ի գոյություն չունեցող որոշումը:

Կադաստրի կոմիտեի վերը նշված պաշտոնյայի հանցավոր գործողությունների հետեւանքով Աբովյան համայնքի հաշվեկշռից ապօրինի դուրս է բերվել առանձնապես խոշոր չափերով՝ 15,900,000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունեցող հողատարածքը:

Բացի այդ, Կադաստրի կոմիտեի մեկ այլ աշխատակցի ներկայացրած՝ նույն հողատարածքում 3965,65 քմ մակերեսով շինությունների վերաբերյալ ուրվագծերի հիման վրա վերը նշված պաշտոնատար անձը սեփականության իրավունքի վկայականում ներառել է կեղծ տվյալներ եւ առանց օրինական հիմքերի առկայության նույն հողամասի գրանցումն իրականացրել 0,08 հա մակերեսով ավել:

Արդյունքում՝ Աբովյան համայնքի հաշվեկշռից, առանց իրավական հիմքի, ապօրինի դուրս է բերվել նաեւ առանձնապես խոշոր չափերով՝ 9,760,000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունեցող հողատարածքը, իսկ համայնքը զրկվել է այդ հողատարածքն ըստ նպատակային նշանակության օգտագործելու եւ հանրության շահերին ծառայեցնելու հնարավորությունից: Նախաքննության ընթացքում քրեական հետապնդում է հարուցվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ եւ նույն օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով (համապատասխանում են 2022 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին եւ 2 դրվագ՝ 445-րդ հոդվածի 1-ին մասին):

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

ԼՈՒՐԵՐ

ԱԶԱՏ ԵՆ ԱՐՁԱԿԵԼ

«Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածու Բորիս Արզումանյանին կյանքից զրկած մեղադրյալին ազատ են արձակել ու բանտից տուն ուղարկել:

Բորիս Արզումանյանի գործով որոշում է կայացվել. նախաքննության ավարտ է հայտարարվել, եւ գործն ուղարկվել է դատարան:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Արտակ Սուրենի Դիլանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2025 թվականի նոյեմբերի 25-ին՝ ժամը 01:00-ից մինչեւ ժամը 01:50-ն ընկած ժամանակահատվածում, իր կողմից շահագործվող ավտոմեքենայով վրաերթի ենթարկելու եղանակով ապօրինաբար կյանքից զրկել է Բ. Վ. Արզումանյանին:

ArmLur.am-ը տեղեկացրել է, որ 31-ամյա Բորիսի եւ մի խումբ տղաների միջեւ վեճ էր եղել, որի հանգուցալուծումը տեղի էր ունեցել ավտոմեքենաները գործի դնելով: Մեքենան մի քանի անգամ վարել էին Բորիսի եւ նրա ընկերների վրա, ինչի հետեւանքով պատգամավորի թեկնածուն սպանվել էր: Արդյունքում, մեզ հայտնի դարձավ, որ դատարանը որոշում է կայացրել Արտակ Սուրենի Դիլանյանի նկատմամբ ընտրված «կալանք» խափանման միջոցը վերացնել եւ նրան անհապաղ ազատ արձակել: Մեղադրյալ Արտակ Սուրենի Դիլանյանի նկատմամբ կիրառել «տնային կալանք» այլընտրանքային խափանման միջոցը՝ 3 (երեք) ամիս ժամկետով: Մեղադրյալ Արտակ Սուրենի Դիլանյանի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց համակցված կիրառել գրավը՝ 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով:

Որոշումը կայացրել է դատավոր Դավիթ Արղամանյանը:

Ք. Մ.

ՄԱՐԻԽՈՒԱՆԱՅԻ ՓԱԹԵԹՆԵՐ

Համայնքային ոստիկանության Մաշտոցի բաժնում ստացված օպերատիվ տեղեկությունն իրացվեց ապրիլի 2-ին: Ժամը 17.25-ին Մարգարյան փողոցի 1-ին նրբանցքում թմրամիջոց ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու կասկածանքով ձերբակալվեց եւ իր վարած «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայով հանդերձ բաժին տեղափոխվեց մայրաքաղաքի Հասրաթյան փողոցի բնակիչ 35-ամյա տղամարդ: Մեքենան տեղափոխվեց պահպանվող հատուկ տարածք եւ կնիքվեց, իսկ տղամարդու խուզարկությամբ հայտնաբերվեց դեղնականաչավուն, ընդհանուր մոտ ութ գրամ զանգվածով չորս փաթեթ, որն ըստ նրա՝ մարիխուանա է: Նա հայտնեց նաեւ, որ վեց փաթեթ արդեն տեղադրել է տարբեր տեղեր: Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում, դատարանի որոշմամբ, ապրիլի 7-ին խուզարկվեց տղամարդու վարած «Ֆորդը». շարժիչի ծածկոցի տակ հայտնաբերվեց նույն դեղնականաչավուն զանգվածով 15 փաթեթ, որոնց ընդհանուր քաշը մոտ 30 գրամ էր:

Նախաքննությունը շարունակվում է:

ԱՐՏԱԳՆԱ ՆԻՍՏ

Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովը՝ հանձնաժողովի նախագահ, Ծառայության պետի առաջին տեղակալ Սահակ Գրիգորյանի գլխավորությամբ, արտագնա նիստ է անցկացրել «Սեւան» քրեակատարողական հիմնարկում: Նիստի ընթացքում հանձնաժողովը քննարկել է ցմահ ազատազրկման դատապարտված որոշ անձանց գործերը նրանց անվտանգային գոտիների փոփոխության նպատակով:

Հանձնաժողովի անդամներն անձամբ հանդիպել են դատապարտյալների հետ, ծանոթացել վերջիններիս կողմից ներկայացվող հիմնավորումներին, տեղում ուսումնասիրել նրանց՝ վերասոցիալականացման, կրթական գործընթացներում ներգրավվածությունն ու աշխատանքային զբաղվածությունը: Անմիջական շփման ընթացքում գնահատվել են նաեւ դատապարտյալների անձնական հատկանիշները եւ հնարավոր ռիսկերը: Նիստի արդյունքում կայացված որոշումների համաձայն՝ որոշ ցմահ դատապարտյալներ իրենց պատժի հետագա կրումը կշարունակեն առավել ցածր անվտանգային գոտիներում եւ պայմաններում:

ԲՈՂՈՔ Է ՏԱՐԵԼ

Փաստաբան Ռուբեն Մելիքյանը հայտնում է. «Քիչ առաջ մեր գրասենյակից ինձ տեղեկացրեցին, որ «Ծաղկազարդի գործով» մեղադրյալ 18-ամյա Դավիթին կալանավորելու, նրա տեսակցությունները լրիվ փակելու մասին քննիչի միջնորդությունն ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ բավարարող դատական ակտի դեմ բողոք է բերել նաեւ .... հսկող դատախազը:

Ո՛չ, չմտածեք, թե հօգուտ Դավիթի է բողոքը .... ո՛չ, ի վնաս է:

Ուշոտ ժամանակ կգտնեմ ու կընթերցեմ բողոքը .... որ հասկանամ, թե էլ ինչ են ուզում Սբ.Պատարագին մասնակցելու համար Եկեղեցի այցելած ու այնտեղ «շառի» մեջ հայտնված տղայից»:

● *Ապրիլի 7-ից 8-ը բացահայտվել է կողոպուտի, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության, սառը զենքի հայտնաբերման 2-ական դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ԵՆ

Տավուշի մարզի պետական առողջապահական հիմնարկներում առկա են բժիշկների ու բուժքույրերի թափուր հաստիքներ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել մարզի պետական բուժհիմնարկներում առկա թափուր հաստիքների վերաբերյալ: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Մարզպետի աշխատակազմի ենթակայության գյուղական բժշկական կազմակերպություններում առկա են 1 ընտանեկան բժշկի (Բագրատաշենի ԳԲԱ) եւ 2 բուժքույրերի (Այգեձորի ԱԿ) թափուր հաստիքներ»: Իրականում, մարզի պետական առողջապահական հիմնարկներում թափուր հաստիքներն ավելի շատ են: Որոշ հաստիքներ էլ զբաղեցված են տարեց, կենսաթոշակառու բժիշկների կողմից: Տավուշի մարզպետի աշխատակազմը հայտնում է, որ Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում «Բուժական գործ» մասնագիտությամբ Տավուշի մարզի համար սահմանված է 5 նպատակային ուսուցման տեղ: Նպատակային տեղերում ընդունված ուսանողները սովորում են անվճար եւ ուսումնառության ընթացքում ստանում են կրթաթոշակ: Նպատակային տեղերում ընդունված դիմորդները պայմանագիր են կնքելու ՀՀ առողջապահության նախարարության հետ, որի համաձայն՝ ուսումն ավարտելուց եւ ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունք ձեռք բերելուց հետո պարտավորվում են վերադառնալ մարզ, առնվազն 3 տարի ժամկետով աշխատել մարզի բժշկական կազմակերպություններում: Ավելի ճիշտ կլիներ մարզերում բժիշկների աշխատավարձերը,նրանց աշխատանքային պայմանները բարելավել, որպեսզի նպատակային ուսուցման տեղերում սովորած, մարզեր գործուղվածները 3 տարի անց չհեռանային մարզի բուժհիմնարկներից՝ կրկին առաջացնելով թափուր հաստիքներ:

ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է

3 տարի առաջ՝ 2023 թվականի փետրվարի 2-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել Տավուշի մարզի պետական հանրակրթական դպրոցներում աշխատող ուսուցիչների եւ ուսուցչի օգնականների թվի վերաբերյալ: Տավուշի մարզպետարանից հայտնել էին, որ մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում են 1830 ուսուցիչ եւ 218 ուսուցչի օգնական: Տավուշի հանրակրթական դպրոցներում աշխատող ուսուցիչների եւ ուսուցչի օգնականների թվի վերաբերյալ մարզպետ Հ. Ղալումյանին հարց եմ ուղղել նաեւ 2026թ. մարտի 30-ին: Տավուշի մարզպետի աշխատակազմից հայտնել են, որ մարտի 30-ի դրությամբ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում են 1582 ուսուցիչ եւ 161 ուսուցչի օգնական: Անցած 3 տարում մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների թվաքանակը նվազել է 248-ով, ուսուցչի օգնականներինը՝ 57-ով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԲԱՆԱԿՑԵԼՈՒ ԵՆ

ԻՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԺԱՄԱՆԻ ԻՍԼԱՄԱԲԱԴ

Իրանի պատվիրակությունը հինգշաբթի երեկոյան կժամանի Պակիստանի մայրաքաղաք Իսլամաբադ՝ քննարկելու Թեհրանի առաջարկած 10 կետից բաղկացած ծրագիրը, որը նպատակ ունի հանգուցալուծել ԱՄՆ-ի եւ Իսրայելի գործողությունները Իրանի դեմ:

Այս մասին հայտնել է Պակիստանում Իրանի դեսպան Ռեզա Ամիրի Մողադամը՝ նշելով, որ պատվիրակությունը ժամանելու է Պակիստան՝ բանակցություններ վարելու հենց այդ ծրագրի հիման վրա:

Նրա խոսքով՝ Իրանի հանրության շրջանում առկա է որոշակի թերահավատություն՝ պայմանավորված հրադադարի բազմակի խախտումներով Իսրայելի կողմից, որոնք, ըստ իրանական կողմի, միտված են խափանել դիվանագիտական գործընթացը: Այնուամենայնիվ, Իրանի պատվիրակությունը, Պակիստանի վարչապետ Շահբազ Շարիֆի հրավերով, մեկնում է Իսլամաբադ՝ «լուրջ բանակցություններ» անցկացնելու նպատակով:

Հիշեցնենք, որ ԱՄՆ-ն եւ Իսրայելը լայնածավալ ռազմական գործողություններ էին սկսել Իրանի դեմ՝ փետրվարի 28-ին Իրանի Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլա Սեյեդ Ալի Խամենեիի, ինչպես նաեւ մի շարք բարձրաստիճան զինվորականների եւ քաղաքացիական անձանց սպանությունից հետո:

Իրանը պատասխան հարվածներ է հասցրել տարածաշրջանում ամերիկյան եւ իսրայելական դիրքերին՝ ցույց տալով իր ռազմական հնարավորությունները: Չնայած նախնական ակնկալիքներին՝ Իրանի արձագանքը, ըստ պաշտոնական աղբյուրների, եղել է զգալիորեն ավելի ուժեղ՝ պատճառելով զգալի վնասներ եւ միավորելով երկրի ներսում դիմադրությունը:

Պակիստանի միջնորդությամբ կողմերը համաձայնության են եկել երկշաբաթյա հրադադարի շուրջ, որի ընթացքում նախատեսվում են բանակցություններ Իսլամաբադում: Իրանը ներկայացրել է 10 կետից բաղկացած ծրագիր, որը ներառում է, մասնավորապես, ԱՄՆ զորքերի դուրսբերում տարածաշրջանից, պատժամիջոցների վերացում եւ Հորմուզի նեղուցի նկատմամբ վերահսկողության հարցը:

Իրանի Ազգային անվտանգության գերագույն խորհուրդը ապրիլի 8-ին հայտարարել է, որ տեղի ունեցածը «պատմական հաղթանակ» է Իրանի համար՝ ընդգծելով, որ ԱՄՆ-ն ստիպված է եղել ընդունել բանակցությունների պայմանները, այդ թվում՝ փոխադարձ չհարձակման եւ ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ դրույթները:

Իրանական կողմը միաժամանակ շեշտում է, որ բանակցությունները չեն նշանակում հակամարտության ավարտ, այլ դիտարկվում են որպես դրա շարունակություն դիվանագիտական հարթակում՝ պահպանելով ԱՄՆ-ի նկատմամբ անվստահության դիրքորոշումը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԹԱՐՄԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼ Է

Սաուդյան Արաբիա կատարած այցի ընթացքում Մեծ Բրիտանիայի վարչապետ Քիր Սթարմերը թագաժառանգ Մուհամմեդ բին Սալմանի հետ քննարկել է Լոնդոնի եւ Ռիադի միջեւ պաշտպանական գործընկերության խորացումը, ասվում է վարչապետի գրասենյակի հայտարարության մեջ:

«Վարչապետն այսօր Ջիդդայում հանդիպել է Սաուդյան Արաբիայի թագաժառանգ Մուհամմեդ բին Սալմանի հետ: Վարչապետը հանդիպումը սկսել է՝ ողջունելով հրադադարը եւ ընդգծելով դրա պահպանման եւ այն երկարատեւ խաղաղության վերածելու ջանքերը կենտրոնացնելու անհրաժեշտությունը:

Նա հստակեցրել է Հորմուզի նեղուցի վերաբացման աշխատանքները շարունակելու կարեւորությունը եւ քննարկել է Մեծ Բրիտանիայի ջանքերը՝ գործընկերների հետ հանդիպումներ կազմակերպելու՝նեղուցով տարանցման նկատմամբ նավագնացության արդյունաբերության վստահությունը բարձրացնելու համար անհրաժեշտ գործնական քայլերը համաձայնեցնելու եւ պլանավորելու համար», - ասվում է հայտարարության մեջ:

Սթարմերը շնորհակալություն է հայտնել թագաժառանգին «երկրում բրիտանացի քաղաքացիներին պաշտպանելու Սաուդյան Արաբիայի ջանքերի համար»: «Վարչապետը պարտավորվել է շարունակել աջակցել Սաուդյան Արաբիային որպես հավատարիմ դաշնակից, այդ թվում՝ Sky Sabre հակաօդային պաշտպանության համակարգի վերջերս տեղակայման միջոցով», - ընդգծվում է հայտարարության մեջ:

Սթարմերը չորեքշաբթի օրը հանդիպել է նաեւ Մերձավոր Արեւելքի երկրում տեղակայված բրիտանական զինվորական անձնակազմի հետ՝ համակարգը շահագործելու համար:

ՍԳՌ ՕՐ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ

Լիբանանում ապրիլի 9-ին ազգային սուգ է հայտարարվել Բեյրութի եւ այլ քաղաքների ռմբակոծությունների ժամանակ 254 քաղաքացիների մահվան կապակցությամբ:

Այս մասին հայտարարվել է վարչապետ Նավաֆ Սալամի կողմից հրապարակված հրամանագրում: «Վարչապետ Սալամը 2026 թվականի ապրիլի 9-ը, հինգշաբթի օրը, հայտարարել է ազգային սգո օր՝ հարյուրավոր անմեղ եւ անզեն քաղաքացիների դեմ Իսրայելի հարձակումների զոհ դարձած հայրենակիցների համար», - ասվում է հրամանագրում: Սալամը հրամայել է փակել կառավարական գրասենյակները, հասարակական կազմակերպությունները եւ քաղաքապետարանները: Ազգային դրոշները կիսով չափ կբարձրանան: Իշխանությունները նաեւ կկարգավորեն ռադիոյի եւ հեռուստատեսության ծրագրերը:

Հիշեցնենք, որ Լիբանանում չորեքշաբթի օրը Իսրայելի կողմից իրականացված հարվածների հետեւանքով զոհվել է ավելի քան 250 մարդ, վիրավորվել՝ ավելի քան 1100-ը, հաղորդում է «Ալ-Ջազիրան»՝ հղում անելով Լիբանանի քաղաքացիական պաշտպանության ծառայությանը:

Ավելի վաղ Լիբանանի առողջապահության նախարարությունը հայտնել էր, որ Լիբանանում Իսրայելի կողմից իրականացված հարվածների հետեւանքով զոհվել է 112 մարդ, վիրավորվել՝ 837-ը: «Լիբանանի քաղաքացիական պաշտպանության տվյալներով՝ չորեքշաբթի օրը տեղի ունեցած հարձակումների հետեւանքով զոհվել է առնվազն 254 մարդ, եւս 1165-ը վիրավորվել է», - ասվում է հեռուստաալիքի հայտարարության մեջ:

● *Ըստ վիճակագրության՝ Հայաստանի Հանրապետությունում ապրիլի 7-ից 8-ը հայտնաբերվել է 1 անհետ կորած:*

ԼՈՒՐԵՐ

ԱՌԱՋԻՆ 15 ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունը համագումար է անցկացրել: Անցկացված համագումարի արդյունքով հաստատվել է նախընտրական ցանկի առաջին 30 թեկնածուները:

Ներկայացնում ենք առաջին 15 անունները.

1. Նարեկ Կարապետյան
2. Արամ Վարդեւանյան
3. Գոհար Մելոյան
4. Դավիթ Ղազինյան
5. Ռուբեն Մխիթարյան
6. Արեգա Հովսեփյան
7. Մամիկոն Ասլանյան
8. Հայկ Ֆարմանյան
9. Մարիաննա Ղահրամանյան
10. Հայկ Սուքիասյան
11. Աշոտ Ֆարսյան
12. Իրինա Յոլյան
13. Էդգար Ղազարյան
14. Տիգրան Աբրահամյան
15. Լենա Մաթեւոսյան *(Գ)*

REDSTORE-Ի 7-ՐԴ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

REDstore խանութների ցանցը, առաջնորդվելով իր հաճախորդների առաջարկներով եւ կարիքներով, հայտարարում է նոր՝ թվով 7-րդ մասնաճյուղի բացման մասին: Նոր մասնաճյուղը գտնվում է Մասիվում՝ Գայի պողոտա 19/55 հասցեում՝ Մեգա Մոլի դիմացի մայթում:

Ընկերության համար առաջնային է հաճախորդների հարմարավետությունն ու ժամանակի խնայողությունը: Վերջին շրջանում քաղաքում աճող խցանումները զգալի անհարմարություններ են առաջացնում եւ հաճախ դառնում ժամանակի կորստի պատճառ: Հաշվի առնելով, որ REDstore-ի հիմնական մասնաճյուղերը կենտրոնացված են քաղաքի կենտրոնում՝ Մասիվի, Ջրվեժի եւ Ավանի բնակիչների շրջանում հաճախ դժվարություններ են առաջանում կենտրոն հասնելու հարցում:

Այս հանգամանքները հաշվի առնելով՝ ընկերությունը որոշում է կայացրել ընդլայնել իր ներկայությունը եւ բացել նոր մասնաճյուղ հենց Նոր Նորք վարչական շրջանում՝ ավելի մոտ լինելով իր հաճախորդներին:

Նոր մասնաճյուղի բացումը կարեւոր եւ սպասված իրադարձություն է տվյալ վարչական շրջանի բնակիչների համար, ովքեր այսուհետ հնարավորություն կունենան օգտվել REDstore-ի լայն էլեկտրոտեխնիկայի տեսականուց՝ առավել արագ, հարմար եւ հասանելի ձեւով՝ առանց կենտրոն գալու անհրաժեշտության:

«Մենք շարունակաբար ընդլայնում ենք մեր ներկայությունը՝ ելնելով մեր հաճախորդների կարիքներից: Մեր նպատակն է լինել ավելի մոտ յուրաքանչյուր հաճախորդին եւ ապահովել առավել հարմարավետ գնումներ», - նշում է REDstore-ի մարքեթինգի բաժնի ղեկավար Հ. Պողոսյանը:

REDstore-ը շարունակելու է իր զարգացումը՝ առաջնորդվելով մեկ հիմնական սկզբունքով՝ գնումները դարձնել ոչ միայն շահավետ, այլեւ հաճելի: *(Գ)*

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ Գ

ՃԱՆԱՉՎԵԼ Է 2026-Ի ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՐԱՅՎԻԹ ԲԱՆԿ

Արդշինբանկը ճանաչվել է «2026 թվականի Լավագույն Փրայվիթ բանկ» Euromoney միջազգային հեղինակավոր ֆինանսական ամսագրի կողմից՝ վերահաստատելով բանկի առաջատար դիրքը Հայաստանի բանկային համակարգում եւ փրայվիթ բանկինգի ծառայությունների ոլորտում:

Մրցանակը շնորհվում է այն ֆինանսական հաստատություններին, որոնք մրցանակաբաշխությանը նախորդող 12 ամիսների ընթացքում աչքի են ընկնում տվյալ սեգմենտի հաճախորդներին մատուցվող ծառայությունների բարձր որակով, ակտիվների կառավարման արդյունավետ լուծումներով, հաճախորդակենտրոն մոտեցմամբ: Գնահատման համար առանցքային չափանիշներից են նաեւ ֆինանսական խորհրդատվության արդյունավետությունը, ներդրումային լուծումների բազմազանությունը, ինչպես նաեւ նորարարական ֆինանսական գործիքների ներդրումն ու կիրառությունը:

Արդշինբանկի կողմից մատուցվող փրայվիթ բանկինգի ծառայությունները հիմնված են անհատական մոտեցման, փորձագիտական ֆինանսական խորհրդատվության եւ կապիտալի կառավարման ժամանակակից լուծումների վրա: Բանկը շարունակաբար զարգացնում է այս ուղղությունը՝ առաջարկելով միջազգային չափանիշներին համապատասխան ծառայություններ եւ բարձրակարգ սպասարկում:

2024 թվականին Երեւանի կենտրոնում բացվեց փրայվիթ բանկինգի հաճախորդների համար առանձնացված գրասենյակ, որն էապես բարձրացրեց սպասարկման որակը եւ հարմարավետությունը:

Փրայվիթ բանքինգի զարգացումն Արդշինբանկի ռազմավարական առաջնահերթություններից է, որի շրջանակում Բանկն առաջարկում է ֆինանսական լուծումների լայն շրջանակ՝ կապիտալի կառավարում, ներդրումային խորհրդատվություն եւ ֆինանսական պլանավորում:

Այս գնահատականը եւս մեկ անգամ ընդգծում է Արդշինբանկի կարեւոր դերակատարությունը Հայաստանի ֆինանսական համակարգում եւ Բանկի հետեւողական աշխատանքը՝ զարգացնելու ժամանակակից, մրցունակ եւ հաճախորդակենտրոն բանկային ծառայություններ:

Բրիտանական Euromoney Institutional Investors ընկերության Euromoney հեղինակավոր ամսագրի կողմից Արդշինբանկն առաջին անգամ մրցանակի արժանացել էր 2015 թվականին:

Արդշինբանկի մասին

Արդշինբանկը Հայաստանի առաջատար բանկն է: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ՝ տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաեւ փրայվիթ բանկինգի ու ակտիվների կառավարման ոլորտներում: Արդշինբանկն ունի ավելի քան 580,000 հաճախորդ, որոնց սպասարկում է բանկի 2,300-ից ավելի աշխատակից: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 73 մասնաճյուղերով:

Արդշինբանկը Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար՝ Standard & Poor's (BB- (Stable)), Moody's (Ba3 (Stable)) եւ Fitch (BB- (Positive)) վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշեր: Բանկն ունի Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

ՓՈԽԱՐԻՆՎԵԼ Է ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ Գ

9-ը ապրիլի, 2026թ., Երեւան. Team Telecom Armenia-ն ամբողջությամբ փոխարինել է 2G ցանցը Հայաստանում՝ դառնալով տարածաշրջանում հեռահաղորդակցության ոլորտում նման պատմական փոփոխություն իրականացրած առաջին օպերատորը:

Մեծամասշտաբ այս ծրագրի արդյունքում ընկերության 1000-ից ավելի բազային կայաններ այժմ աշխատում են բացառապես արդի տեխնոլոգիաներով՝ բաժանորդներին ապահովելով բջջային կապի եւ ինտերնետի ավելի հուսալի, անվտանգ եւ արագ հասանելիությամբ: Միաժամանակ, ծառայությունների անխափան տրամադրման նպատակով ընկերությունը այն բաժանորդներին, որոնք նախագծի մեկնարկից առաջ՝ երեք ամիսների ընթացքում օգտագործել են միայն 2G ցանցում աշխատող հեռախոսներ, հնարավորություն է ընձեռել փոխարինելու իրենց հեռախոսները: Առաջարկից այս պահին օգտվել է 20 000-ից ավելի բաժանորդ, եւ հնարավորությունը դեռ հասանելի է:

Ավելի քան 30 տարի ծառայած երկրորդ սերնդի ցանցի փոխարինման արդյունքում ազատված հաճախականությունները, ենթակառուցվածքները, սարքավորումներն ու ռեսուրսներն այժմ օգտագործվում են ամբողջ Հայաստանում ժամանակակից 4G եւ 5G ծածկույթներն ընդլայնելու նպատակով:

«Ուրախությամբ եմ արձանագրում, որ Team-ով ողջ Կովկասում առաջինը ստանձնեցինք այս պատասխանատվությունը՝ դառնալով տելեկոմ ոլորտում պատմական կարեւոր էջը փակելու եւ նոր տեխնոլոգիաներին ընդառաջ գնալու առաջնորդը: Այս առանցքային փոփոխությունը հնարավորություն է ստեղծել ոչ միայն արդիականացնելու շարժական կապի ենթակառուցվածքը, այլեւ բարձրացնելու ծառայությունների թվային անվտանգությունը»,-ասում է Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

Նոր տեխնոլոգիաներին անցումը ոչ միայն թույլ է տալիս բաժանորդներին միաժամանակ օգտվելու ինչպես ձայնային, այնպես էլ ինտերնետ ծառայություններից, այլեւ զգալիորեն բարձրացնում է ցանցի էներգաարդյունավետությունը եւ թվային անվտանգությունը՝ ապահովելով առավել առաջադեմ, հասանելի եւ կայուն կապ Հայաստանի ամբողջ տարածքում:

Team Telecom Armenia-ի մասին

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին: Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԿՐԿԻՆ ՄԻԱՍԻՆ

ՇՔԵՂ ՊՐԵՄԻԵՐԱ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՎԱՐՏ

«Էյֆորիա» հեռուստասերիալի երրորդ՝ եւ հավանաբար վերջին սեզոնի պրեմիերան մեծ շուքով կայացավ Լոս Անջելեսում՝ կրկին միավորելով նախագծի գլխավոր աստղերին: Կարմիր գորգին հայտնվել էին սերիալի ամենահայտնի դերասանները՝ Zendaya, Sydney Sweeney եւ Jacob Elordi, որոնք վերջին տարիներին դարձել են Հոլիվուդի ամենաղահանջված դեմքերից:



Euphoria սերիալը, որի հեղինակն է Սեմ Լեւինսոնը, առաջին երկու սեզոններով մեծ հաջողություն ունեցավ՝ բացահայտելով նոր սերնդի դերասանական տաղանդներ: Չորս տարվա դադարից հետո նախագիծը վերադառնում է՝ նոր պատմություններով եւ կերպարների զարգացմամբ:

Զենդայան կրկին մարմնավորում է Ռուին՝ մի կերպար, որը շարունակում է պայքարել իր կախվածությունների եւ վտանգավոր միջավայրի դեմ: Վերջինիս խոսքով՝ այս սեզոնը կարող է դառնալ սերիալի եզրափակիչը: Մինչ այդ դերասանուհին հասցրել է նկարահանվել մի շարք խոշոր նախագծերում, այդ թվում՝ «Dune» եւ «Spider-Man» ֆիլմաշարերում:

Սիդնի Սվինիի մարմնավորած Քեսսին այս անգամ ներկայացվում է նոր՝ ավելի հասուն կերպարով՝ որպես մեծահասակների բովանդակություն ստեղծող: Դերասանուհին եւս մեծ հաջողությունների է հասել՝ նկարահանվելով տարբեր ֆիլմերում եւ հաստատելով իր դիրքը կինոարդյունաբերությունում:

Զեյքոբ Էլորդին, ով սերիալում խաղում է Նեյթին, նույնպես շարունակում է առաջխաղացումը՝ արժանանալով մրցանակաբաշխությունների ուշադրությանը եւ նկարահանվելով հեղինակավոր նախագծերում:

Նոր սեզոնում կհայտնվեն նաեւ նոր դեմքեր, այդ թվում՝ Նատաշա Լիոնը, որը միացել է դերասանական կազմին: Միեւնույն ժամանակ, սերիալը հարգանքի տուրք է մատուցում դերասան Անգուս Քլոուդին, որը մահացել էր 2023 թվականին: Լեւինսոնը նշել է, որ պատմության միջոցով փորձել են պահպանել նրա հիշատակը:

Սերիալի ապագան դեռեւս անորոշ է. ստեղծագործական թիմը կենտրոնացած է ներկայիս սեզոնի որակի վրա: Եթե պատմությունը բնական ավարտ ունենա, հնարավոր է՝ սա լինի եզրափակիչը, սակայն ստեղծողները չեն բացառում շարունակությունը՝ կախված գաղափարներից եւ ներշնչումից:

«Էյֆորիա»-ն շարունակում է մնալ ժամանակակից հեռուստատեսության ամենաազդեցիկ նախագծերից մեկը՝ համադրելով ուժեղ դերասանական խաղ, համարձակ թեմատիկա եւ յուրահատուկ վիզուալ ոճ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ապրիլի 7-19-ը Լեհաստանի Կատովիցե քաղաքում անցկացվում է 2026 թվականի շախմատի Եվրոպայի անհատական առաջնությունը: 2 խաղափուլից հետո գրոսմայստերներ Շանթ Սարգսյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Էմին Օհանյանը եւ միջազգային վարպետ Արթուր Դավթյանը ունեն 2 միավոր: Գրոսմայստերներ Մանուէլ Պետրոսյանը, Մամիկոն Ղարիբյանը, Հայկ Մարտիրոսյանը եւ Գաբրիել Սարգսյանը ունեն 1.5 միավոր: Նույն արդյունքն ունեն նաեւ միջազգային վարպետներ Վահե Սուքիասյանը եւ Արսեն Դավթյանը, ինչպես նաեւ ՖԻԴԵ-ի վարպետներ Հայկ Երիցյանը եւ Տիգրան Համբարձումյանը: 3-րդ խաղափուլը կմեկնարկի ապրիլի 9-ին՝ Հայաստանի ժամանակով 17:00-ին:

ՄԱՐԶԻՉԸ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Ֆրանսիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր ՊՍԺ-ի իսպանացի գլխավոր մարզիչ Լուիս Էնրիկեն մեկնաբանել է 2:0 հաշվով հաղթանակն Անգլիայի չեմպիոն «Լիվերպուլի» նկատմամբ Չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակիչի առաջին խաղում, որը տեղի է ունեցել Փարիզում: «Ափսոս, որ երկու գոլ խփեցինք: Մեր երկրպագուների ներկայությամբ բարձրակարգ խաղ ցուցադրեցինք, շատ լավ խաղացինք եւ արժանի էինք ավելի շատ գոլերի, բայց սա Չեմպիոնների լիգան է: Մենք գոհ ենք արդյունքից, առջեւում դեռ պատասխան հանդիպում կա: Զարմանալի էր «Լիվերպուլի» այդպիսի խաղը: Մենք սովոր ենք, որ մրցակիցները հարմարվում են մեր խաղին: Այս անգամ այդպես չեղավ: Բայց մենք կենտրոնացած ենք մեր խաղի վրա: Լիվերպուլում եւս կձգտենք հաղթանակի»,- Լուիս Էնրիկեի խոսքը մեջբերում է Canal+-ը: Պատասխան հանդիպումն Անգլիայում տեղի կունենա ապրիլի 14-ին:

ԼԱՎ Է ՋԳՈՒՄ

Ռուսաստանի գավաթի «Դինամո»-ի դեմ առաջին խաղը «Կրասնոդար»-ն ավարտել է գոլազուրկ ոչ-ոքիով: Այդ խաղը 176-րդն է եղել թիմի ավագ էդուարդ Սպերցյանի համար: Հայ ֆուտբոլիստը «Կարսնոդար»-ի ակադեմիայի սաներից առաջինն է, որ այդքան շատ թվով հանդիպումներ է անցկացրել գլխավոր թիմում: Այդ ցուցանիշով նա շրջանցել է Մատվեյ Սաֆանովին: «Կրասնոդար»-ի գլխավոր մարզիչ Մուրադ Մուսաեւն ասել է, որ Սպերցյանն արդեն իրեն լավ է զգում. «Վտանգն անցել է: Ամենակարեւորն այն էր, որ պահեց բժիշկների խորհրդով տրված դադարը: Նա արդեն ամբողջովին վերականգնվել է ու ոչ մի խնդիր չունի»: Սպերցյանը թեթեւ վնասվածք ստացել էր Հայաստանի հավաքականի մարզումային ճամբարում, որի պատճառով բաց էր թողել նաեւ Բելառուսի դեմ հանդիպումը:

ԼՈՒՐԵՐ

ԱՎԵՏԱՐԱՆԸ ԿԲԵՐՎԻ ԵԿԵՂԵՑԻ

Շուրջ 26 տարի Արագածոտնի թեմում ձեւավորված բարի ավանդույթի համաձայն Կրկնազատկի տոնին Շուրիշկանի Հրաշագործ Ավետարանը Մատենադարանից տեղափոխվում է Մուղնու Սուրբ Գեւորգ եկեղեցի՝ հերկրպագություն հավատացյալների եւ ուխտավորների:

Այս տարի եւս, Արագածոտնի թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տեր Մկրտիչ եպս. Պռոշյանի օրհնությամբ կամքն Աստծո՝ ապրիլի 12-ին Մաշտոցի անվան Մատենադարանից Մուղնու Սուրբ Գեւորգ եկեղեցի կբերվի Շուրիշկանի հրաշագործ Ավետարանը ու կմատուցվի Սուրբ եւ Անմահ Պատարագ, սկիզբը ժամը 10:00:

Սուրբ Ավետարանը եկեղեցում կմնա մինչեւ ժամը 16:00-ն:

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԵՆ

Հայոց ցեղասպանության հուշահամալիրի հիմնանորոգման եւ բարեկարգման աշխատանքներին հետեւելու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն այսօր հերթական այցն է կատարել հուշահամալիր:

Նրան ուղեկցել են ԿԳՄՍՆ գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանը եւ ՀՑԹԻ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հրաչյա Թաշչյանը: Ցեղասպանության հուշահամալիրի նախագծի հեղինակային խմբի ճարտարապետների եւ կապալառու շինարարական ընկերության ներկայացուցիչները նախարարին ներկայացրել են աշխատանքների ընթացքը՝ նշելով, որ մույթերի նորոգումը, ինչպես նաեւ ամրացման եւ բարեկարգման մնացած աշխատանքներն ավարտական փուլում են եւ ընթանում են ըստ նախագծի: Նախարարը հերթական անգամ ընդգծել է աշխատանքների որակի ու ժամկետների պահպանման խնդիրը:

ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԿԱԶՄԸ

Բռնցքամարտի Հայաստանի հավաքականները կմասնակցեն Բրազիլիայում անցկացվելի աշխարհի գավաթի խաղարկության մրցաշարին, հաղորդում է ՀԲՖ-ի մամուլի ծառայությունը: Տղամարդկանց հավաքականի գլխավոր մարզիչ Ռուդիչ Մկրտչյանը թիմում ընդգրկել է հետեւյալ բռնցքամարտիկներին.

50 կգ՝ Ռուդոլֆ Գարբոյան
55 կգ՝ Ժիրայր Սարգսյան
60 կգ՝ Արթուր Բազեյան
65 կգ՝ Արթուր Սահակյան
70 կգ՝ Արարատ Հարությունյան
90 կգ՝ Նարեկ Մանասյան
+90 կգ՝ Դավիթ Չալոյան

Կանանց հավաքականի գլխավոր մարզիչ Վազգեն Բադալյանը թիմում ընդգրկել է 51 կգ քաշային Անուշ Գրիգորյանին եւ 65 կգ քաշային Էլիդա Քոչարյանին: Հավաքականներն այժմ մարզական հավաք են անցկացնում Օլիմպավանում, Բրազիլիա կմեկնեն ապրիլի 17-ին:

ՆՇՈՒՄ ԵՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ 21–ԱՄՅԱԿԸ

Մեծ Բրիտանիայի թագավոր Չարլզ IIIը եւ թագուհի Կամիլան այսօր նշում են իրենց ամուսնության 21-ամյակը՝ ամրապնդելով ավելի քան հինգ տասնամյակ ձգվող հարաբերությունները:Ժամանակին հանրային խիստ քննադատության թիրախ դարձած Կամիլան տարիների ընթացքում կարողացել է փոխել իր կերպարը՝ «երրորդ անձից» վերածվելով թագավորի համար անփոխարինելի աջակցության եւ կյանքի ուղեկցի: Չարլզը եւ Կամիլան միմյանց կյանքում են արդեն ավելի քան հիսուն տարի, եւ այսօր՝ ամուսնության 21-րդ տարեդարձին, առավել քան երբեւէ ակնհայտ է, որ Կամիլան թագավորի համար ոչ միայն կյանքի ընկերն է, այլ նաեւ նրա ամենամոտ մարդը եւ վստահելի հենարանը: Նրանց հարաբերությունները, որոնք սկզբում դիտարկվում էին որպես անցողիկ սիրավեպ, հետագայում վերածվել են աշխարհի ամենաքննարկվող պատմություններից մեկի: Կամիլա Պարկեր Բոուլզը երկար ժամանակ ներկայացվում էր որպես «երրորդ անձ», եւ նրա անձնական կյանքի գրեթե բոլոր մանրամասները լայնորեն լուսաբանվում էին մամուլում: Սակայն տարիների ընթացքում, հանրային կապերի արդյունավետ աշխատանքի, հետեւողական ջանքերի եւ ակտիվ գործունեության շնորհիվ, Կամիլան կարողացավ փոխել հասարակական ընկալումը եւ հաստատել իր տեղը բրիտանական միապետության կենտրոնում:

Ա. Վ.

● *Ա.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում ապրիլի 12-ին՝ ժամը 18:00-ին, կկայաան Պ. Չայկովսկու «ԿԱՐԱՊԻ ԼԻՃԸ» բալետը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ անեմ, եթե չեմ ուզում լինել երաշխավոր մի վարկառուի, որը չի կատարում վճարումները:
Ռուզաննա Սիմոնյան, 35 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ երաշխավորը՝ երաշխավորության պայմանագրով, վարկ վերցրած անձի հետ միասին բանկի առջեւ պարտավորվում է պատասխանատվություն կրել վարկային պարտավորությունը լրիվ կամ մասնակի չկատարելու դեպքերում: Ընդ որում, բանկը կարող է վարկի մարում պահանջել ինչպես վարկ վերցրած անձից, այնպես էլ երաշխավորից: Եթե վարկառուն չի կատարում իր պարտավորությունները, ապա Դուք Ձեր երաշխավորի կարգավիճակը կարող եք դադարեցնել հետեւյալ դեպքերում.

Դուք՝որպես երաշխավոր, կարող եք առանց վարկառուի կամքը հաշվի առնելու վարկառուի փոխարեն վճարել նրա վարկային այն պարտավորությունները, որոնց համար երաշխավոր եք դարձել, իսկ հետո բանկին վճարած գումարի չափով պահանջ ներկայացնել վարկառուի հանդեպ: Այդ պահանջը կարող է բավարարվել վարկառուի համաձայնությամբ կամ դատարանի որոշմամբ հարկադիր կարգով: Այս դեպքում բանկի կողմից գումարի նկատմամբ տույժ եւ տուգանքներ չեն հաշվարկիվի, եւ որպես երաշխավորի՝ Ձեզ սեփականության իրավունքով պատկանող գույքի, աշխատավարձի նկատմամբ կալանքներ չեն կիրառվի Ձեզ պատկանող գույքի վրա: Բացի այդ, դրանով հանդերձ, չի վատթարանա Ձեր վարկային պատմությունը: Դուք կարող եք դիմում ներկայացնել բանկին՝ խնդրելով Ձեզ փոխարինել այլ անձով: Սակայն պետք է հաշվի առնել, որ բանկը կարող է բավարարել կամ չբավարարել ձեր դիմում-պահանջը՝ գնահատելով տվյալ անձի գույքային դրությունը եւ այլ հնարավորությունները՝ երաշխավոր հանդսիանալու վերաբերյալ: Վարկառուն չի կարող ավելի անբարենպաստ գույքային դրության մեջ լինել, քան Դուք, եւ չպետք է բացասական վարկային պատմություն ունենա: Այս հանգամանքները ազդելու են բանկի կողմից որոշում կայացնելու վրա:

Եթե բանկն առանց Ձեր համաձայնության վարկառուի հետ փոփոխել է պարտավորության չափը՝ մեծացնելով այն, կամ նմանատիպ փոփոխությունը հանգեցրել է Ձեզ համար անբարենպաստ այլ հետեւանքների, Դուք իրավունք ունեք դիմել դատարան՝ պահանջելով դադարած ճանաչել երաշխավորության պայմանագիրը: Դուք իրավունք ունեք դատական կարգով պահանջել դադարած ճանաչել երաշխավորության պայմանագիրը նաեւ այն դեպքում, երբ բանկը չի ընդունել կամ հրաժարվել է ընդունել վարկառուի կամ Ձեր կողմից վարկի վճարումները՝ անկախ այդպիսի հրաժարման պատճառներից: Ուսումնասիրեք Ձեր եւ բանկի միջեւ կնքված երաշխավորության պայմանագիրը, քանի որ երաշխավորությունը դադարած է համարվում նաեւ այն դեպքում, երբ երաշխավորության պայմանագրում նշված երաշխավորության ժամկետն ավարտվել է: Իսկ եթե նման ժամկետ նշված չէ, ապա երաշխավորությունը դադարում է, եթե բանկը վարկի վճարումը կատարելու ժամկետը լրանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, գումարի բռնագանձման պահանջով հայցապահանջ չի ներկայացրել դատարանին:

ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինձնից գումար հափշտակելու գործը հասել է դատարան, բայց գումարս չեմ ստացել: Ո՞ւմ դիմեմ:
Գարիկ Ասատրյան, 56 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. *(Սկիզբը՝ նախորդ համարում)* Քաղաքացիական հայցվորն իր ներկայացրած հայցը պաշտպանելու նպատակով իրավունք ունի ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը եւ ներկայացնել դրա մասին իր դիտողությունները, նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել եւ գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություններ, մասնակցել առաջին ատյանի եւ վերաքննիչ դատարանների նիստերին, դատարանում հանդես գալ ճառով եւ ռեպլիկով, իր խնդրանքով անվճար ստանալ մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման պատճենը, ինչպես նաեւ դատավճռի կամ դատարանի այլ վերջնական որոշման պատճենը, իր ներկայացրած հայցի մասով բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները եւ որոշումները, հետ վերցնել իր կամ իր ներկայացուցչի ներկայացրած ցանկացած բողոքը, իր ներկայացրած հայցի մասով առարկություններ ներկայացնել դատավճռի կամ դատարանի այլ վերջնական որոշման դեմ բերված դատավարության այլ մասնակիցների բողոքների վերաբերյալ, դատարանի նիստում կարծիք հայտնել դատավարության այլ մասնակիցների միջնորդությունների եւ առաջարկությունների առիթով, բողոքել մյուս կողմի անօրինական գործողությունների դեմ, ունենալ ներկայացուցիչ եւ դադարեցնել ներկայացուցչի լիազորությունները, քրեական գործով վարույթի ցանկացած պահին հրաժարվել հայցից, ստանալ քրեական գործով վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցումը, հետ ստանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես իրեղեն ապացույց կամ այլ հիմքերով իրենից վերցված գույքը, ինչպես նաեւ իրեն պատկանող պաշտոնական փաստաթղթերի բնօրինակները եւ այլն:

Քննչական մարմին

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քաղաքացիական հայցն իր մեջ պետք է պարունակի Ձեզանից հափշտակված կոնկրետ գումարի չափը, որը ցանկանում եք, որ հետ գանձվի հանցագործություն կատարած անձից: Քաղաքացիական հայցը պետք է հասցեագրել այն դատավորին, որը քննում է քրեական գործը, իսկ օրինակները պետք է ուղարկեք ինչպես մեղադրանքը պաշտպանող դատախազին, այնպես էլ՝ մեղադրվող անձանց:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Ողբերգական ավտովթար Սպիտակ-Վանաձոր ճանապարհին. մահացածները ՀՀ ՊՆ զինծառայողներ էին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 1 - 5 + 6 + 9
Կոտայքի լեռներ	- 1 - 4 + 6 + 9
Կոտայքի նախալեռներ	+ 2 + 4 +10 + 13
Գեղարքունիք	- 1 - 5 + 6 + 10
Լոռի	0 - 4 + 4 + 8
Տավուշ	- 2 + 1 + 6 + 9
Արագածոտնի լեռներ	- 2 - 5 + 3 + 6
Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 5 + 9 + 14

Արարատ	+ 4 + 7 +12 + 15
Արմավիր	+ 5 + 8 +13 + 16
Վայոց ձորի լեռներ	0 - 3 + 3 + 6
Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 10 +13 + 16
Սյունիքի լեռներ	- 1 - 4 + 2 + 4
Սյունիքի նախալեռներ	- 2 + 2 +12 + 15
Սյունիքի հովիտներ	+ 3 + 6 +18 + 22
Երեւան	+ 4 + 6 +14 +16

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **09.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*